



ՀՀ Շրջակա միջավայրի
նախարարություն



ՀՀ ՇՄՆ «Հիդրոօդերևութաբանության
և մոնիթորինգի կենտրոն» ՊՈԱԿ

ԱՄՓՈՓԱԳԻՐ

Հայաստանի Հանրապետության տարածքում
2024 թվականի մակերևութային ջրերի որակի

Բ ո վ ա ն դ ա կ ու թ յ ու ն

Ներածություն.....	4
ՀՀ մակերևութային ջրերի աղտոտվածության գնահատումը.....	6
Հյուսիսային ջրավազանային կառավարման տարածք.....	7
Ախուրյան ջրավազանային կառավարման տարածք.....	10
Հրազդան ջրավազանային կառավարման տարածք.....	11
Սևան ջրավազանային կառավարման տարածք.....	14
Սևանա լիճ.....	16
Արարատյան ջրավազանային կառավարման տարածք.....	19
Հարավային ջրավազանային կառավարման տարածք.....	20
Հիդրոկենսաբանական մոնիթորինգ.....	21
Մակերևութային ջրերի որակի հետազոտական մոնիթորինգ.....	22
Արաքս գետ.....	23

Գծապատկերների ցանկ

Գծապատկեր 1. Կոմունալ-կենցաղային կեղտաջրերով աղտոտված հիմնական գետերում ամոնիում իոնի կոնցենտրացիան 2023-2024 թթ.	5
Գծապատկեր 2. Կոմունալ-կենցաղային կեղտաջրերով աղտոտված հիմնական գետերում ֆոսֆատ իոնի կոնցենտրացիան 2023-2024 թթ.....	5
Գծապատկեր 3. Գետերի և ջրամբարների ջրի որակի նկարագիրը.....	6
Գծապատկեր 5. Փամբակ գետում ամոնիում իոնի կոնցենտրացիայի փոփոխությունը.....	8
Գծապատկեր 6. Դեբեդ գետում մոլիբդենի կոնցենտրացիայի փոփոխությունը.....	8
Գծապատկեր 7. Ախթալա գետում պղնձի կոնցենտրացիայի փոփոխությունը.....	8
Գծապատկեր 8. Շնող գետում մոլիբդենի կոնցենտրացիայի փոփոխությունը.....	9
Գծապատկեր 9. Շնող գետում պղնձի կոնցենտրացիայի փոփոխությունը.....	9
Գծապատկեր 10. Ախուրյան գետում նիտրիտ իոնի կոնցենտրացիայի փոփոխությունը... ..	10
Գծապատկեր 11. Քասախ գետում ամոնիում իոնի կոնցենտրացիայի փոփոխությունը	12
Գծապատկեր 12. Քասախ գետում ֆոսֆատ իոնի կոնցենտրացիայի փոփոխությունը.....	12
Գծապատկեր 13. Հրազդան գետում ամոնիում իոնի կոնցենտրացիայի փոփոխությունը.. ..	12
Գծապատկեր 14. Հրազդան գետում նիտրիտ իոնի կոնցենտրացիայի փոփոխությունը....	13
Գծապատկեր 15. Հրազդան գետում ֆոսֆատ իոնի կոնցենտրացիայի փոփոխությունը....	13
Գծապատկեր 16. Գետառ գետում ամոնիում իոնի կոնցենտրացիայի փոփոխությունը	13
Գծապատկեր 17. Գետառ գետում ֆոսֆատ իոնի կոնցենտրացիայի փոփոխությունը.....	13

Գծապատկեր 18 Սևանա լիճ թափվող գետերում ամռնիում իռնի կոնցենտրացիան 2023-2024թթ.	16
Գծապատկեր 19. Սևանա լիճ թափվող գետերում ֆոսֆատ իռնի կոնցենտրացիան 2023-2024թթ.	16
Գծապատկեր 20. Մեծ սևանում ամռնիում իռնի կոնցենտրացիան 2023-2024թթ.	17
Գծապատկեր 21. Փոքր սևանում ամռնիում իռնի կոնցենտրացիան 2023-2024թթ.	17
Գծապատկեր 22. Մեծ սևանում ֆոսֆատ իռնի կոնցենտրացիան 2023-2024թթ.....	18
Գծապատկեր 23. Փոքր սևանում ֆոսֆատ իռնի կոնցենտրացիան 2023-2024թթ.	18
Գծապատկեր 24. Զրամբարներում ամռնիում իռնի կոնցենտրացիայի փոփոխությունը ..	20
Գծապատկեր 25. Զրամբարներում ֆոսֆատ իռնի կոնցենտրացիայի փոփոխությունը	21

Ներածություն

Ամփոփագիրը կազմված է Հայաստանի Հանրապետության մակերևութային ջրերի որակի մասին տեղեկատվություն ապահովելու, գետերի համեմատաբար աղտոտված հատվածները հայտնաբերելու նպատակով:

Միջավայրի պայմանների և մարդու առողջության վրա բացասաբար ազդող ֆիզիկական, քիմիական և կենսաբանական աղտոտիչների թափանցումը, առաջացումն ու կուտակումը բնական ջրերում կոչվում է ջրի աղտոտում: Ջրի աղտոտման աղբյուրները հետևյալն են.


- կենցաղային հոսքաջրերը,
- արդյունաբերական հոսքաջրերը,
- ձնհալի և անձրևների ժամանակ հողահանդակներից տեղափոխված պեստիցիդները,
- բնակավայրերից վնասակար նյութերը,
- անձրևի և ձյան միջոցով՝ մթնոլորտից անջատվող աղտոտող նյութերը:

Աղտոտման աղբյուրները կարող են լինել ինչպես կետային, այնպես էլ ցրված: Կենցաղային հոսքաջրերը հիմնականում աղտոտված են լինում կենսածին նյութերով, արդյունաբերական հոսքաջրերը՝ առավել հաճախ նավթամթերքներով, ֆենոլներով, ծանր մետաղներով (կապար, կադմիում, պղինձ, ցինկ և այլն) և բարդ օրգանական միացություններով (սինթետիկ լվացամիջոցներ, ներկեր, ճարպեր), որոնք վատթարացնում են ջրի որակը, խմելու և սննդի մեջ օգտագործելու համար դարձնում ոչ պիտանի, խախտվում են ջրային ավազանի կենսաբանական շարժընթացները, նվազում է աղտոտող նյութերից ջրի ինքնամաքման հատկությունը, փոխվում է ջրային կենսաբազմազանության կազմն ու սննդային արժեքը: Հատկապես վտանգավոր են տաք հոսքաջրերը, որոնք փոխում են ջրավազանի ջերմային ռեժիմը, վատթարացնում ձկների ձվադրության պայմանները, ոչնչանում են մի շարք օգտակար մանրէներ և զարգանում են մակաբույծներ: Կենցաղային հոսքաջրերը հիմնականում պարունակում են աղիքային վարակիչ հիվանդությունների հարուցիչներ:


Հայաստանի Հանրապետությունում մակերևութային, այդ թվում նաև Սևանա լճի ջրերի որակի գնահատումը կատարվում է համաձայն ՀՀ կառավարության 2011 թվականի հունվարի 27-ի 75-Ն որոշման: Գնահատման համակարգը ջրի որակի յուրաքանչյուր ցուցանիշի համար տարբերակում է կարգավիճակի հինգ դաս՝ «գերազանց» (1-ին դաս), «լավ» (2-րդ դաս), «միջակ» (3-րդ դաս), «անբավարար» (4-րդ դաս) և «վատ» (5-րդ դաս): Ջրի որակի ընդհանրական գնահատականը ձևավորվում է վատագույն որակ ցուցաբերող ցուցանիշի դասով: Արաքս գետի ջրի որակի գնահատումը դեռևս կատարվում է 1990 թվականին ընդունված մակերևութային ջրերի աղտոտվածության ձկնատնտեսական սահմանային թույլատրելի կոնցենտրացիաների կիրառմամբ:

Մակերևութային ջրերի որակի մոնիթորինգի արդյունքների համաձայն՝ ՀՀ գետերի ակունքներում և բնակավայրերից վեր գտնվող հատվածներում ջրի որակը համեմատաբար բարձր է, քան խոշոր բնակավայրերից և քաղաքներից հետո, երբեմնաքրված կոմունալ-կենցաղային կեղտաջրերի գետեր արտահոսելու հետևանքով, դիտվում է ջրի աղտոտման աստիճանի աճ: Արդյունքում՝ այդ հատվածներում ջրի որակը հիմնականում գնահատվում է որպես «միջակ» կամ «վատ» (3-րդ դասից 5-րդ դաս): Աղտոտվածությունը պայմանավորված է ջրում

ամոնիումի, ֆոսֆատների, նիտրիտ իոնների, ինչպես նաև ընդհանուր ֆոսֆորի բարձր պարունակությամբ: Հատկապես աղտոտված են Փամբակ գետը՝ Վանաձոր քաղաքից հետո, Ախուրյան գետը՝ Ամասիա գյուղից, Գյումրի քաղաքից և Բագարան գյուղից հետո, Կարկաչուն գետը՝ գետաբերանի հատվածում, Մեծամոր գետը՝ Վաղարշապատ քաղաքից հարավ, Վաղարշապատ քաղաքից հարավ-արևելք և Ռանչպար գյուղից ներքև հատվածներում, Հրազդան գետը՝ Երևան քաղաքից հետո մինչև գետաբերանն ընկած հատվածում, Գետառ գետը՝ գետաբերանի հատվածում, Ծաղկաձոր գետը՝ Ծաղկաձոր քաղաքից հետո, Վարարակ գետը՝ Գորիս քաղաքից հետո հատվածում:



Գծապատկեր 1. Կոմունալ-կենցաղային կեղտաջրերով աղտոտված հիմնական գետերում ամոնիում իոնի կոնցենտրացիան 2023-2024 թթ.




Գծապատկեր 2. Կոմունալ-կենցաղային կեղտաջրերով աղտոտված հիմնական գետերում ֆոսֆատ իոնի կոնցենտրացիան 2023-2024 թթ.

Հանքարդյունաբերության գործունեության հետևանքով ծանր մետաղներով հատկապես աղտոտվում են Ախթալա, Շնող, Աճանան (Նորաշենիկ), Կարճևան գետերը՝ գետաբերանի հատվածներում, որտեղ ջրի որակը գնահատվել է հիմնականում «վատ» (5-րդ դաս):


ՀՀ մակերևութային ջրերի աղտոտվածության գնահատումը

2024 թվականի տվյալների համաձայն ՀՀ գետերի դիտակետերի 10%-ում ջրի որակը գնահատվել է 2-րդ դաս («լավ» որակ), 35%-ում՝ 3-րդ դաս («միջակ» որակ), 23%-ում՝ 4-րդ դաս («անբավարար» որակ) և 31%-ում՝ 5-րդ դաս («վատ» որակ):

ՀՀ գետերի ջրի որակի նկարագիրը 2023-2024 թվականներին



2024 թվականին ՀՀ ջրամբարների ջրի որակի նկարագիրը (դիտակետերի ընդհանուր թիվ՝ 6)



Փծապատկեր 3. Գետերի և ջրամբարների ջրի որակի նկարագիրը

Հյուսիսային ջրավազանային կառավարման տարածք

Փամբակ գետի ջրի որակը Խնկոյան գյուղից վերև, Սպիտակ քաղաքից ներքև և Վանաձոր քաղաքից վերև հատվածներում գնահատվել է «միջակ» (3-րդ դաս). Խնկոյան գյուղից վերև հատվածում՝ պայմանավորված ամոնիում իոնով, Սպիտակ քաղաքից ներքև հատվածում՝ ամոնիում, նիտրատ իոններով, ընդհանուր անօրգանական ազոտով և ընդհանուր լուծված աղերով, Վանաձոր քաղաքից վերև հատվածում՝ ամոնիում, նիտրատ իոններով և ընդհանուր լուծված աղերով: Վանաձոր քաղաքից ներքև հատվածում ջրի որակը գնահատվել է «վատ» (5-րդ դաս)՝ պայմանավորված ամոնիում իոնով:

Դեբեդ գետի ջրի որակը Մարց գետի թափման կետից ներքև հատվածում գնահատվել է «միջակ» (3-րդ դաս)՝ պայմանավորված ամոնիում իոնով, Այրում քաղաքից վերև և սահմանի մոտ հատվածներում՝ «անբավարար» (4-րդ դաս). Այրում քաղաքից վերև հատվածում՝ պայմանավորված մոլիբդենով և կախության չոր նյութերով, սահմանի մոտ հատվածում՝ կախության չոր նյութերով:

Չորագետ գետի ջրի որակը Ստեփանավան քաղաքից վերև հատվածում գնահատվել է «միջակ» (3-րդ դաս)՝ պայմանավորված մանգանով, գետաբերանի հատվածում ջրի որակը գնահատվել է «լավ» (2-րդ դաս):

Տաշիր գետի ջրի որակը Միխայելովկա գյուղից վերև հատվածում գնահատվել է «անբավարար» (4-րդ դաս)՝ պայմանավորված ամոնիում իոնով և մանգանով, Սարատովկա գյուղից ներքև հատվածում՝ «միջակ» (3-րդ դաս)՝ պայմանավորված երկաթով, ալյումինով և կախության չոր նյութերով:

Մարց գետի ջրի որակը գետաբերանի հատվածում գնահատվել է «միջակ» (3-րդ դաս)՝ պայմանավորված կախության չոր նյութերով:


Ախթալա գետի ջրի որակը գետաբերանի հատվածում գնահատվել է «վատ» (5-րդ դաս)՝ պայմանավորված ցինկով, պղնձով, կադմիումով, մանգանով, կոբալտով, սուլֆատ իոնով և կախության չոր նյութերով:

Գարգառ գետի ջրի որակը ակունքում գնահատվել է «լավ» (2-րդ դաս):


Շնող գետի ջրի որակը գետաբերանում գնահատվել է «վատ» (5-րդ դաս)՝ պայմանավորված պղնձով, մոլիբդենով, սուլֆատ իոնով և կախության չոր նյութերով:

Աղստև գետի ջրի որակը Դիլիջան քաղաքից վերև, Իջևան քաղաքից վերև և ներքև հատվածներում գնահատվել է «անբավարար» (4-րդ դաս). Դիլիջան քաղաքից վերև հատվածում՝ պայմանավորված երկաթով, Իջևան քաղաքից վերև և ներքև հատվածներում՝ երկաթով և բերիլիումով, Դիլիջան քաղաքից ներքև հատվածում գետի ջրի որակը գնահատվել է «միջակ» (3-րդ դաս)՝ պայմանավորված ամոնիում, նիտրիտ իոններով, երկաթ. և կախության չոր նյութերով:


Գետիկ գետի ջրի որակը Վահան գյուղից վերև և գետաբերանի հատվածներում գնահատվել է «անբավարար» (4-րդ դաս). Վահան գյուղից վերև՝ պայմանավորված երկաթով, բերիլիումով և ալյումինով, գետաբերանի հատվածում՝ երկաթով, բարիումով և բերիլիումով:





Գծապատկեր 4. Փամբակ գետում ամոնիում իոնի կոնցենտրացիայի փոփոխությունը



Գծապատկեր 5. Դեբեդ գետում մոլիբդենի կոնցենտրացիայի փոփոխությունը



Գծապատկեր 6. Ախթալա գետում պղինձի կոնցենտրացիայի փոփոխությունը




Ախտության ջրավազանային կառավարման տարածք

Ախտության գետի ջրի որակը Ամասիա գյուղից վերև հատվածում գնահատվել է «լավ» (2-րդ դաս), Ամասիա գյուղից ներքև և Գյումրի քաղաքից ներքև հատվածներում՝ «վատ» (5-րդ դաս). Ամասիա գյուղից ներքև հատվածում՝ պայմանավորված ամոնիում իոնով, Գյումրի քաղաքից ներքև հատվածում՝ երկաթով և կախութային չոր նյութերով: Գյումրի քաղաքից վերև և Բազարան գյուղից ներքև հատվածներում ջրի որակը գնահատվել է «միջակ» (3-րդ դաս). Գյումրի քաղաքից վերև հատվածում՝ պայմանավորված ամոնիում իոնով, արսենով, մոլիբդենով, երկաթով և կախութային չոր նյութերով, Բազարան գյուղից ներքև հատվածում՝ արսենով, մոլիբդենով, մանգանով, երկաթով, ընդհանուր լուծված աղերով և կախութային չոր նյութերով:

Աշոցք գետի ջրի որակը Մուսայելյան գյուղից վերև հատվածում գնահատվել է «լավ» (2-րդ դաս), գետաբերանի հատվածում՝ «միջակ» (3-րդ դաս)՝ պայմանավորված արսենով, երկաթով և բորով:

Կարկաչուն գետի ջրի որակը գետաբերանի հատվածում գնահատվել է «վատ» (5-րդ դաս)՝ պայմանավորված ամոնիում, ֆոսֆատ իոններով, մանգանով և ընդհանուր ֆոսֆորով:

Մեծամոր գետի ջրի որակը Վաղարշապատ քաղաքից հարավ և Վաղարշապատ քաղաքից հարավ-արևելք հատվածներում գնահատվել է «վատ» (5-րդ դաս). Վաղարշապատ քաղաքից հարավ հատվածում՝ պայմանավորված ամոնիում իոնով, Վաղարշապատ քաղաքից հարավ-արևելք հատվածում՝ լուծված թթվածնով և ամոնիում իոնով: Ռանչպար գյուղից ներքև հատվածում ջրի որակը գնահատվել է «միջակ» (3-րդ դաս)՝ պայմանավորված լուծված թթվածնով, թթվածնի քիմիական պահանջարկով, ամոնիում, նիտրիտ, ֆոսֆատ իոններով, արսենով, մանգանով, երկաթով, բորով և ընդհանուր ֆոսֆորով:



Գծապատկեր 9. Ախտության գետում նիտրիտ իոնի կոնցենտրացիայի փոփոխությունը

Հրագրան ջրավազանային կառավարման տարածք

Քասախ գետի ջրի որակը Ապարան քաղաքից վերև և ներքև հատվածներում գնահատվել է «անբավարար» (4-րդ դաս). Ապարան քաղաքից վերև հատվածում՝ պայմանավորված բերիլիումով, Ապարան քաղաքից ներքև հատվածում՝ ամոնիում իոնով և ընդհանուր ֆոսֆորով, Աշտարակ քաղաքից վերև և ներքև և գետաբերանի հատվածներում ջրի որակը գնահատվել է «միջակ» (3-րդ դաս). Աշտարակ քաղաքից վերև հատվածում՝ պայմանավորված վանադիումով և երկաթով, Աշտարակ քաղաքից ներքև հատվածում՝ ֆոսֆատ իոնով, վանադիումով, երկաթով և ընդհանուր ֆոսֆորով, գետաբերանի հատվածում՝ նիտրիտ, նիտրատ, ֆոսֆատ իոններով, վանադիումով, երկաթով, նատրիումով և ընդհանուր ֆոսֆորով:

Գեղարոտ գետի ջրի որակը Արագած գյուղից վերև հատվածում գնահատվել է «վատ» (5-րդ դաս)՝ պայմանավորված մանգանով, կոբալտով և երկաթով, գետաբերանի հատվածում՝ «միջակ» (3-րդ դաս)՝ պայմանավորված ամոնիում, նիտրատ իոններով, մանգանով և երկաթով:


Շաղվարդ գետի ջրի որակը Փարպի գյուղից ներքև հատվածում գնահատվել է «անբավարար» (4 -րդ դաս)՝ պայմանավորված վանադիումով:

Հրագրան գետի ջրի որակը Գեղամական գյուղի մոտ և Քաղսի գյուղից ներքև հատվածներում գնահատվել է «լավ» (2-րդ դաս), Արգել գյուղից ներքև և Արգնի ՀԷԿ-ից վերև հատվածներում՝ «միջակ» (3-րդ դաս). Արգել գյուղից ներքև հատվածում՝ պայմանավորված արսենով և բարիումով, Արգնի ՀԷԿ-ից վերև՝ արսենով: Երևան քաղաքից ներքև՝ Դարբնիկ գյուղի մոտ, գետաբերանի և Գեղանիստ գյուղի մոտ հատվածներում ջրի որակը գնահատվել է «վատ» (5-րդ դաս). Երևան քաղաքից ներքև՝ Դարբնիկ գյուղի մոտ՝ պայմանավորված լուծված թթվածնով, ամոնիում, ֆոսֆատ իոններով, ընդհանուր անօրգանական ազոտով և ընդհանուր ֆոսֆորով, գետաբերանի հատվածում՝ ամոնիում իոնով, Գեղանիստ գյուղի մոտ հատվածում՝ նիտրիտ իոնով: Երևանյան լճի մուտքի մոտ հատվածում ջրի որակը գնահատվել է «անբավարար» (4-րդ դաս)՝ պայմանավորված ամոնիում, նիտրիտ, ֆոսֆատ իոններով և ընդհանուր ֆոսֆորով:


Գետառ գետի ջրի որակը գետաբերանի հատվածում գնահատվել է «վատ» (5-րդ դաս)՝ պայմանավորված ամոնիում, նիտրիտ, ֆոսֆատ իոններով, ընդհանուր անօրգանական ազոտով և ընդհանուր ֆոսֆորով:

Մարմարիկ գետի ջրի որակը Հանքավան գյուղից վերև հատվածում գնահատվել է «լավ» (2-րդ դաս), գետաբերանում՝ «անբավարար» (4-րդ դաս)՝ պայմանավորված մանգանով:


Ծաղկաձոր գետի ջրի որակը Ծաղկաձոր քաղաքից վերև հատվածում գնահատվել է «միջակ» (3-րդ դաս)՝ պայմանավորված մանգանով, վանադիումով, երկաթով, բարիումով և ալյումինով, Ծաղկաձոր քաղաքից ներքև հատվածում՝ «վատ» (5-րդ դաս)՝ պայմանավորված՝ ամոնիում իոնով և մանգանով:







Գծապատկեր 10. Քասախ գետում ամոնիում իոնի կոնցենտրացիայի փոփոխությունը



Գծապատկեր 11. Քասախ գետում ֆոսֆատ իոնի կոնցենտրացիայի փոփոխությունը
Գծապատկեր 12. Հրազդան գետում ամոնիում իոնի կոնցենտրացիայի փոփոխությունը





Սևան ջրավազանային կառավարման տարածք



Ձկնագետ գետի ջրի որակը Մեմյոնովկա գյուղից վերև հատվածում գնահատվել է «միջակ» (3-րդ դաս)՝ պայմանավորված ալյումինով, գետաբերանի հատվածում՝ «վատ» (5-րդ դաս)՝ պայմանավորված բերիլիումով:

Մասրիկ գետի ջրի որակը գետաբերանում գնահատվել է «անբավարար» (4-րդ դաս)՝ պայմանավորված վանադիումով և ծարիրով:

Սոթք գետի ջրի որակը գետաբերանում գնահատվել է «վատ» (5-րդ դաս)՝ պայմանավորված ծարիրով:

Կարճաղբյուր գետի ջրի որակը Ախպրաձոր գյուղից վերև հատվածում գնահատվել է «անբավարար» (4-րդ դաս)՝ պայմանավորված ալյումինով, գետաբերանի հատվածում՝ «միջակ» (3-րդ դաս)՝ պայմանավորված ֆոսֆատ իոնով և ընդհանուր ֆոսֆորով:

Վարդենիս գետի ջրի որակը Վարդենիկ գյուղից վերև գնահատվել է «միջակ» (3-րդ



դաս)՝ պայմանավորված մանգանով, ալյումինով և կախության չոր նյութերով, գետաբերանի հատվածում՝ «վատ» (5-րդ դաս)՝ պայմանավորված ամոնիում իոնով:

Մարտունի գետի ջրի որակը Գեղիովիտ գյուղից վերև հատվածում գնահատվել է «միջակ» (3-րդ դաս)՝ պայմանավորված բարիումով, ալյումինով, մանգանով և սուլֆատ իոնով, գետաբերանում՝ «միջակ» (3-րդ դաս)՝ պայմանավորված ամոնիում, ֆոսֆատ, սուլֆատ իոններով, բարիումով, ալյումինով, մանգանով, ընդհանուր ֆոսֆորով և ընդհանուր լուծված աղերով:

Արգիճի գետի ջրի որակը Լեռնահովիտ գյուղից վերև հատվածում գնահատվել է «լավ» (2-րդ դաս), գետաբերանի հատվածում՝ «միջակ» (3-րդ դաս)՝ պայմանավորված ֆոսֆատ իոնով, վանադիումով և ընդհանուր ֆոսֆորով:

Ծակքար գետի ջրի որակը գետաբերանում գնահատվել է «միջակ» (3-րդ դաս)՝ պայմանավորված ընդհանուր լուծված աղերով:

Շողվազ գետի ջրի որակը գետաբերանում գնահատվել է «միջակ» (3-րդ դաս)՝ պայմանավորված ֆոսֆատ, քլորիդ իոններով, մոլիբդենով, վանադիումով, նատրիումով, ընդհանուր ֆոսֆորով և ընդհանուր լուծված աղերով:

Գավառագետ գետի ջրի որակը Ծաղկաշեն գյուղից վերև հատվածում գնահատվել է «լավ» (2-րդ դաս), գետաբերանի հատվածում՝ «վատ» (5-րդ դաս)՝ պայմանավորված վանադիումով:

Արփա-Սևան ջրատարի ջրի որակը Ծովինար գյուղից հարավ-արևելք հատվածում գնահատվել է «միջակ» (3-րդ դաս)՝ պայմանավորված արսենով, մոլիբդենով, մանգանով և ալյումինով:


Սևանա լիճ

Սևանա լճի ջրի որակի մոնիթորինգն իրականացվել է լճի տարբեր խորություններից (Մեծ Սևանի 22-րդ կայանի մոտ՝ մակերևույթից, 0.5, 5, 10, 20, 25, 30 մետր խորություններից, Փոքր Սևանի 4-րդ կայանի մոտ նաև՝ 55, 70, 80 մետր խորություններից, իսկ Այրիվանքի մոտ՝ մակերևույթից, 5, 10, 20, 30 և 40 մետր խորություններից)։


Մեծ և Փոքր Սևանների ջրի որակը 2024 թվականին գնահատվել է 3-րդ դասից («միջակ» որակից) 5-րդ դաս («վատ» որակ)՝ պայմանավորված հիմնականում կենսածին նյութերով։

Սևանա լճի աղտոտման հավանական պատճառ են հանդիսանում կոմունալ-կենցաղային կեղտաջրերի, ինչպես նաև գյուղատնտեսական հոսքաջրերի՝ առանց պատշաճ մակարդակով մաքրվելու ներհոսքերը Սևանի ԶԿՏ-ի գետեր կամ անմիջապես Սևանա լիճ։ Ամբողջապես չմաքրված կեղտաջրերն իրենց հետ գետեր, իսկ այնուհետև լիճ են տանում ազոտի և ֆոսֆորի զգալի քանակություն։


Սևանա լիճ թափվող գետերի գետաբերաններում ազոտի և ֆոսֆորի պարունակությունները ներկայացված են գրաֆիկական տեսքով.





Գծապատկեր 17. Սևանա լիճ թափվող գետերում ամոնիում իոնի կոնցենտրացիան 2023-2024թթ.




Գծապատկեր 18. Սևանա լիճ թափվող գետերում ֆոսֆատ իոնի կոնցենտրացիան 2023-2024թթ.





Գծապատկեր 19. Մեծ Սևանում ամոնիում իոնի կոնցենտրացիան 2023-2024թթ.



Գծապատկեր 20. Փոքր Սևանում ամոնիում իոնի կոնցենտրացիան 2023-2024թթ.



Գծապատկեր 21. Մեծ Սևանում ֆոսֆատ իոնի կոնցենտրացիան 2023-2024թթ.



Գծապատկեր 22. Փոքր Սևանում ֆոսֆատ իոնի կոնցենտրացիան 2023-2024թթ.

Արարատյան ջրավազանային կառավարման տարածք

Վեդի գետի ջրի որակը Ուրցաձոր գյուղից վերև հատվածում գնահատվել է «միջակ» (3-րդ դաս)՝ պայմանավորված ալյումինով և կախության չոր նյութերով, Արարատ քաղաքից ներքև՝ «վատ» (5-րդ դաս)՝ պայմանավորված ամոնիում իոնով:

Արփա գետի ջրի որակը Ջերմուկ քաղաքից վերև հատվածում գնահատվել է «անբավարար» (4-րդ դաս)՝ պայմանավորված ալյումինով, Վայք քաղաքից վերև և ներքև, Եղեգնաձոր քաղաքից վերև և Արենի գյուղից ներքև հատվածներում՝ «միջակ» (3-րդ դաս). Վայք քաղաքից վերև՝ պայմանավորված մոլիբդենով, մանգանով, երկաթով և ալյումինով, Վայք քաղաքից ներքև՝ մոլիբդենով, մանգանով, երկաթով և բարիումով, Եղեգնաձոր քաղաքից վերև և Արենի գյուղից ներքև հատվածներում՝ պայմանավորված մոլիբդենով, մանգանով, երկաթով, բարիումով և ալյումինով:

Դարբ գետի ջրի որակը ակունքում գնահատվել է «անբավարար» (4-րդ դաս)՝ պայմանավորված ալյումինով, գետաբերանում՝ «միջակ» (3-րդ դաս)՝ պայմանավորված մոլիբդենով, մանգանով, երկաթով, բարիումով և ալյումինով:

Հերիեր գետի ջրի որակը գետաբերանում գնահատվել է «միջակ» (3-րդ դաս)՝ պայմանավորված երկաթով:

Եղեգիս գետի ջրի որակը Գետիկվանք գյուղից վերև հատվածում գնահատվել է «միջակ» (3-րդ դաս)՝ պայմանավորված երկաթով, Շատին գյուղից ներքև հատվածում՝ «միջակ» (3-րդ դաս)՝ պայմանավորված արսենով, մոլիբդենով, մանգանով, երկաթով և բարիումով:

Հարավային ջրավազանային կառավարման տարածք

Մեղրիգետ գետի ջրի որակը Մեղրի քաղաքից վերև և գետաբերանի հատվածներում գնահատվել է «վատ» (5-րդ դաս). Մեղրի քաղաքից վերև՝ պայմանավորված մանգանով, գետաբերանում՝ մանգանով, կոբալտով և երկաթով:

Գեղի գետի ջրի որակը Աջաբաջ գյուղից վերև հատվածում գնահատվել է «լավ» (2-րդ դաս), գետաբերանի հատվածում՝ «միջակ» (3-րդ դաս)՝ պայմանավորված մանգանով և երկաթով:


Որոտան գետի ջրի որակը Գորայք գյուղից վերև և Սիսիան քաղաքից վերև հատվածներում գնահատվել է «միջակ» (3-րդ դաս). Գորայք գյուղից վերև հատվածում՝ պայմանավորված մանգանով, երկաթով, բարիումով և ծարիրով, Սիսիան քաղաքից վերև՝ ֆոսֆատ իոնով, մոլիբդենով, մանգանով, վանադիումով և երկաթով: Սիսիան քաղաքից ներքև հատվածում ջրի որակը գնահատվել է «վատ» (5-րդ դաս)՝ պայմանավորված մանգանով:

Սիսիան գետի ջրի որակը Արևիս գյուղից վերև հատվածում գնահատվել է «միջակ» (3-րդ դաս)՝ պայմանավորված ալյումինով, գետաբերանի հատվածում՝ «անբավարար» (4-րդ դաս)՝ պայմանավորված մոլիբդենով և մանգանով:


Որոտան-Արփա ջրատարի թունելի ելքի հատվածում ջրի որակը գնահատվել է «անբավարար» (4-րդ դաս)՝ պայմանավորված երկաթով:

ՀՀ ջրամբարների ջրի որակը 2024 թվականին

Արփի լիճ ջրամբարի ջրի որակը գնահատվել է «վատ» (5-րդ)՝ պայմանավորված կախության չոր նյութերով: Ախուրյանի ջրամբարի ջրի որակը գնահատվել է «միջակ» (3-րդ դաս)՝ պայմանավորված թթվածնի քիմիական պահանջարկով, ընդհանուր ֆոսֆորով և կախության չոր նյութերով, Երևանյան լիճ ջրամբարի ջրի որակը գնահատվել է «անբավարար» (4-րդ)՝ պայմանավորված ամոնիում, նիտրիտ իոններով և ընդհանուր ֆոսֆորով: Ապարանի, Ազատի և Կեչուտի ջրամբարների ջրի որակը գնահատվել է «լավ» (2-րդ դաս):



Գծապատկեր 23. Ջրամբարներում ամոնիում իոնի կոնցենտրացիայի փոփոխությունը



Գծապատկեր 24. Ջրամբարներում ֆոսֆատ իոնի կոնցենտրացիայի փոփոխությունը

Հիդրոկենսաբանական մոնիթորինգ

Գետերի ջրի որակն ըստ հիդրոկենսաբանական ցուցանիշների գնահատվել է՝ հաշվի առնելով մակրոանոդնաշարավորների տեսակների բազմազանությունը, կենդանիների տեսակների քանակները և տեսակների զգայունությունը աղտոտիչների նկատմամբ:

1-ին դաս («գերազանց» որակ)՝ տաքսոնոմիական կազմը և բազմազանությունը, ամբողջովին կամ համարյա ամբողջովին համապատասխանում են անադարտ վիճակին:

2-րդ դաս («լավ» որակ)՝ անադարտ վիճակի հետ համեմատությամբ, տաքսոնոմիական կազմը և բազմազանությունը փոփոխվում են աննշան:

3-րդ դաս («միջակ» որակ)՝ տաքսոնոմիական կազմը և բազմազանությունը, չափավոր շեղվում են անադարտ վիճակից:

4-րդ դաս («անբավարար» որակ)՝ տաքսոնոմիական կազմը և բազմազանությունը բավականին շեղվում են անադարտ վիճակից:

5-րդ դաս («վատ» որակ)՝ տաքսոնոմիական կազմը և բազմազանությունը լիովին շեղվում են անադարտ վիճակից:

2024 թվականին հիդրոկենսաբանական մոնիթորինգ իրականացվել է Հյուսիսային, Ախուրյանի և Արարատյան ՋԿՏ-ներում հունիս, օգոստոս և սեպտեմբեր ամիսներին:

Հյուսիսային ՋԿՏ-ի գետերում իրականացված մոնիթորինգի արդյունքների համաձայն Փամբակ գետի ջրի որակը Վանաձոր քաղաքից ներքև հատվածում գնահատվել է 5-րդ դաս («վատ» որակ):

Դեբեդ գետի ջրի որակը Այրում քաղաքից վերև հատվածում գնահատվել է 3-րդ դաս («միջակ» որակ), Քարկոպ գյուղի մոտ՝ 4-րդ դաս («անբավարար» որակ):

Չորագետ գետի ջրի որակը Ստեփանավան քաղաքից վերև և գետաբերանի հատվածներում գնահատվել է 1-ին դաս («գերազանց» որակ):

Մարց գետի ջրի որակը գետաբերանի հատվածում գնահատվել է 3-րդ դաս («միջակ» որակ):

Շնող գետի ջրի որակը Թեղուտ գյուղից վերև գնահատվել է 1-ին դաս («գերազանց» որակ), Շնող գյուղի մոտ՝ 5-րդ դաս («վատ» որակ):

Չիչխան գետի ջրի որակը Շիրակամուտ գյուղից վերև գնահատվել է 1-ին դաս («գերազանց» որակ):

Սևաբերդ գետի ջրի որակը Նորամուտ գյուղի մոտ հատվածում գնահատվել է 1-ին դաս («գերազանց» որակ):

Աղտն գետի ջրի որակը Դիլիջան քաղաքից ներքև հատվածում գնահատվել է 3-րդ դաս («միջակ» որակ), Իջևան քաղաքից ներքև հատվածում՝ 2-րդ դաս («լավ» որակ):

Գետիկ գետի ջրի որակը գետաբերանի հատվածում գնահատվել է 3-րդ դաս («միջակ» որակ):

Ախուրյանի ՋԿՏ-ի գետերում իրականացված մոնիթորինգի արդյունքների համաձայն Եղանջուր գետի ջրի որակը Գառնաճիճ գյուղի մոտ հատվածում գնահատվել է 1-ին դաս («գերազանց» որակ):

Ջրառատ գետի ջրի որակը գյուղ Կառնուտի ջրամբարից ներքև հատվածում գնահատվել է 5-րդ դաս («վատ» որակ):

Աշոցք գետի ջրի որակը Մուսայեղյան գյուղից վերև հատվածում գնահատվել է 1-ին դաս («գերազանց» որակ), Կրասար գյուղի մոտ հատվածում՝ 4-րդ դաս («անբավարար» որակ):

Ախուրյան գետի ջրի որակը Ամասիա գյուղից վերև հատվածում գնահատվել է 3-րդ դաս («լավ» որակ), Ամասիա գյուղից ներքև՝ 4-րդ դաս («անբավարար» որակ), Գյումրի քաղաքից վերև հատվածում՝ 1-ին դաս («գերազանց» որակ), Գյումրի քաղաքից ներքև հատվածում՝ 5-րդ դաս («վատ» որակ), Արփի լճից ներքև հատվածում՝ 2-րդ դաս («լավ» որակ):

Արթիկջուր գետի ջրի որակը Արթիկ քաղաքի մոտ հատվածում գնահատվել է 1-ին դաս («գերազանց» որակ):

Արարատյան ՋԿՏ-ի գետերում իրականացված մոնիթորինգի արդյունքների համաձայն Արփա գետի ջրի որակը Ջերմուկ քաղաքի մոտ հատվածում գնահատվել է 1-ին դաս («գերազանց» որակ), Ջեղեա և Ագարակաձոր գյուղերի մոտ հատվածներում՝ 2-րդ դաս («լավ» որակ), Արենի քաղաքի մոտ հատվածում՝ 3-րդ դաս («միջակ» որակ):

Եղեգիս գետի ջրի որակը Գետիկվանք գյուղի մոտ հատվածում գնահատվել է 1-ին դաս («գերազանց» որակ), Գետափ գյուղի մոտ հատվածում՝ 2-րդ դաս («լավ» որակ):

Դարբ գետի ջրի որակը Ուղեձոր գյուղի մոտ և գետաբերանի հատվածներում գնահատվել է 1-ին դաս («գերազանց» որակ):

Հերիեր գետի ջրի որակը գետաբերանում գնահատվել է 1-ին դաս («գերազանց» որակ):

Մակերևութային ջրերի որակի հետազոտական մոնիթորինգ

2024 թվականին իրականացվել է հետազոտական մոնիթորինգ Հյուսիսային ՋԿՏ-ի Դեբեդ գետի ավազանում, ինչպես նաև Սևանի ՋԿՏ-ում:

Հետազոտական մոնիթորինգի նպատակն է կայուն մեթոդաբանական հիմք ձևավորել և հավելյալ տեղեկատվություն հավաքել ապագա մոնիթորինգի ծրագրերի համար՝ որպես գետավազանային կառավարման պլանավորման էական մաս:

Հյուսիսային ՋԿՏ

Դեբեդ գետի ջրի որակը Ալավերդի քաղաքից ներքև հատվածում գնահատվել է «միջակ» (3-րդ դաս)՝ պայմանավորված մանգանով, երկաթով և կախության չոր

նյութերով, Նահատակ գետի թափման կետից ներքև հատվածում՝ «անբավարար» (4-րդ դաս)՝ պայմանավորված կախության չոր նյութերով:

Շնոդ գետի ջրի որակը Թեղուտ գյուղից վերև գնահատվել է «անբավարար» (4-րդ դաս)՝ պայմանավորված բերիլիումով:

Կաթնաղբյուր գետի ջրի որակը Արմանիս գյուղի մոտ հատվածում գնահատվել է «վատ» (5-րդ դաս)՝ պայմանավորված ցինկով, կադմիումով, մանգանով և կոբալտով:

Լավար գետի ջրի որակը գետաբերանի հատվածում գնահատվել է «վատ» (5-րդ դաս)՝ պայմանավորված պղնձով և սուլֆատ իոնով:

Չիչխան գետի ջրի որակը Շիրակամուտ գյուղի մոտ հատվածում գնահատվել է «միջակ» (3-րդ դաս)՝ պայմանավորված ամոնիում իոնով:

Սևաբերդ գետի ջրի որակը Նորամուտ գյուղից վերև հատվածում գնահատվել է «միջակ» (3-րդ դաս)՝ պայմանավորված երկաթով:

Սևանի ՋԿՏ

Դարանակ գետի ջրի որակը գետաբերանի հատվածում գնահատվել է «միջակ» (3-րդ դաս)՝ պայմանավորված նիկելով և ընդհանուր լուծված աղերով:

Շիշկերտ գետի ջրի որակը գետաբերանի հատվածում գնահատվել է «միջակ» (3-րդ դաս)՝ պայմանավորված կոբալտով և կախության չոր նյութերով:

Արծվանիստ գետի ջրի որակը գետաբերանի հատվածում գնահատվել է «միջակ» (3-րդ դաս)՝ պայմանավորված մանգանով, կոբալտով, երկաթով, ալյումինով և ընդհանուր ֆոսֆորով:

Արտանիշ գետի ջրի որակը գետաբերանի հատվածում գնահատվել է «անբավարար» (4-րդ դաս)՝ պայմանավորված ալյումինով և կախության չոր նյութերով:

Ծափաթաղ գետի ջրի որակը գետաբերանի հատվածում գնահատվել է «միջակ» (3-րդ դաս)՝ պայմանավորված ընդհանուր լուծված աղերով:

Զիլ գետի ջրի որակը Զիլ գյուղից վերև հատվածում գնահատվել է «անբավարար» (4-րդ դաս)՝ պայմանավորված ամոնիում, ֆոսֆատ իոններով, ընդհանուր ֆոսֆորով և կախության չոր նյութերով:

Փամբակ գետի ջրի որակը գետաբերանի հատվածում գնահատվել է «լավ» (2-րդ դաս):

Հետազոտական մոնիթորինգի արդյունքները կցվում են ստորև.

Արաքս գետ

Արաքս գետի 6 դիտակետից վերցված ջրի փորձանմուշներում որոշված ցուցանիշներից, ըստ ձկնատնտեսական նորմերով գնահատման, գերազանցվել են, ամոնիում, նիտրիտ, սուլֆատ իոնների, պղնձի, քրոմի, նիկելի, մանգանի, վանադիումի, երկաթի, ալյումինի և սելենի ՍԹԿ-ները: Արաքս գետի 2 դիտակետում իրականացվել են հատակային նստվածքների ուսումնասիրություններ:

Հավելված 1. ՀՀ մակերևութային ջրերի որակի մոնիթորինգի դիտացանց

Ջրավազանային կառավարման տարածք	Ջրային ռեսուրս	Դիտակետի համար	Տեղադիրք	Մոնիթորինգի տեսակը	Աշխարհագրական կոորդինատներ	
					լայնություն	երկայնություն
Հյուսիսային	Փամբակ	1	0.5 կմ գյ. Խնկոյանից վերև	Հղումային	40.84789	44.02672
	Փամբակ	2	0.5 կմ ք. Սպիտակից ներքև	Գործառնական	40.83108	44.29681
	Փամբակ	3	1 կմ ք. Վանաձորից վերև	Գործառնական	40.84675	44.40758
	Փամբակ	4	0.5 կմ ք. Վանաձորից ներքև	Գործառնական	40.81389	44.50769
	Դեբեդ	5	0.5 կմ Մարց գետի թափման կետից ներքև	Գործառնական	40.99859	44.65354
	Դեբեդ	6	0.5 կմ ք. Այրումից վերև	Գործառնական	41.20257	44.90504
	Դեբեդ	7	Սահմանի մոտ	Աղտոտիչների տեղափոխման	41.22172	44.88339
	Չորագետ	8	0.5 կմ ք. Ստեփանավանից վերև	Հսկողական	41.01344	44.38164
	Չորագետ	10	Գետաբերան	Գործառնական	40.95783	44.63109
	Տաշիր	11	0.5 կմ գյ. Միխայելովկայից վերև	Հղումային	41.16904	44.26781
	Տաշիր	12	0.5 կմ գյ. Սարատով- կայից ներքև	Հսկողական	41.05566	44.33864

Ջրավազանային կառավարման տարածք	Ջրային ռեսուրս	Դիտակետի համար	Տեղադիրք	Մոնիթորինգի տեսակը	Աշխարհագրական կոորդինատներ	
					լայնություն	երկայնություն
Հյուսիսային	Մարց գետ	13	Գետաբերան	Գործառնական	40.98386	44.65898
	Ախթալա	14	Գետաբերան	Գործառնական	41.14967	44.77919
	Գարգառ	210	Ակունք	Հղումային	40.97106	44.40867
	Գարգառ	342	Գետաբերան	Հսկողական	40.95372	44.58012
	Շնող	343	Գետաբերան	Գործառնական	41.14547	44.83301
	Աղստն	15	1.2 կմ ք. Դիլիջանից վերև	Գործառնական	40.73207	44.81782
	Աղստն	16	0.5 կմ ք. Դիլիջանից ներքև	Գործառնական	40.75892	44.90480
	Աղստն	17	2 կմ ք. Բջնանից վերև	Գործառնական	40.85888	45.12481
	Աղստն	18	2 կմ ք. Բջնանից ներքև	Գործառնական	40.91377	45.15943
	Գետիկ	19	0.5 կմ գյ. Վահանից վերև	Հղումային	40.57461	45.40817
	Գետիկ	20	Գետաբերան	Գործառնական	40.75971	45.02166
Ախուրյան	Արաքս	25	0.9 կմ գյ. Հուշա- կերտից ներքև	Աղտոտիչների տեղափոխման	40.07982	43.75280
	Ախուրյան	31	1 կմ գյ. Ամասիայից վերև	Գործառնական	40.95883	43.79635
	Ախուրյան	32	1 կմ գյ. Ամասիայից ներքև	Գործառնական	40.94267	43.78777
	Ախուրյան	33	0.8 կմ ք. Գյումրիից վերև	Գործառնական	40.80424	43.79810
	Ախուրյան	34	5 կմ ք. Գյումրիից ներքև	Գործառնական	40.74380	43.78729
	Ախուրյան	35	0.5 կմ գյ. Բազարանից ներքև	Գործառնական	40.13618	43.65183

Ջրավազանային կառավարման տարածք	Ջրային ռեսուրս	Դիտակետի համար	Տեղադիրք	Մոնիթորինգի տեսակը	Աշխարհագրական կոորդինատներ	
					լայնություն	երկայնություն
Ախուրյան	Աշոցք	36	0.5 կմ գլ. Մուսայելյանից վերև	Հսկողական	40.98659	43.94436
	Աշոցք	37	Գետաբերան	Գործառնական	41.03280	43.82355
	Կարկաչուն	38	Գետաբերան	Գործառնական	40.73280	43.79404
	Մեծամոր	40	10 կմ ք. Վաղարշապատից հարավ	Գործառնական	40.09378	44.27545
	Մեծամոր	41	11 կմ ք. Վաղարշապատից հարավ-արևելք	Գործառնական	40.07371	44.28507
	Մեծամոր	42	0.5 կմ գլ. Ռանչպարից ներքև	Գործառնական	40.01670	44.37400
	Արփի լճի ջրամբար	109	Ամբարտակի մոտ	Հսկողական	41.06756	43.65364
	Ախուրյանի ջրամբար	110	Ամբարտակի մոտ	Հսկողական	40.56001	43.65449
Հրազդան	Արաքս	26	Հրազդան գետի թափ. կետից վերև	Աղտոտիչների տեղափոխման	39.97026	44.47332
	Արաքս	27	Հրազդան գետի թափ. կետից ներքև	Աղտոտիչների տեղափոխման	39.96577	44.48335
	Քասախ	43	0.5 կմ ք. Ապարանից վերև	Գործառնական	40.59530	44.34576
	Քասախ	44	0.5 կմ ք. Ապարանից ներքև	Գործառնական	40.58532	44.37516
	Քասախ	45	1 կմ ք. Աշտարակից վերև	Գործառնական	40.29888	44.37375
	Քասախ	46	3.5 կմ ք. Աշտարակից ներքև	Գործառնական	40.25667	44.31453

Ջրավազանային կառավարման տարածք	Ջրային ռեսուրս	Դիտակետի համար	Տեղադիրք	Մոնիթորինգի տեսակը	Աշխարհագրական կոորդինատներ	
					լայնություն	երկայնություն
Հրազդան	Քասախ	47	Գետաբերան	Գործառնական	40.16574	44.25708
	Գեղարոտ	48	0.5 կմ գյ. Արագածից վերև	Հղումային	40.48888	44.31748
	Գեղարոտ	49	Գետաբերան	Գործառնական	40.48026	44.39616
	Շաղվարդ	50	0.5 կմ գյ. Փարպիից ներքև	Հսկողական	40.32051	44.31017
	Հրազդան	51	գյ. Գեղամավանի մոտ	Հղումային	40.57085	44.90705
	Հրազդան	52	0.5 կմ գյ. Քաղսիից ներքև	Գործառնական	40.49911	44.74314
	Հրազդան	53	0.5 կմ գյ. Արգելից ներքև	Գործառնական	40.37640	44.60682
	Հրազդան	54	0.5 կմ Արզնի ՀԷԿ-ից ներքև	Գործառնական	40.29530	44.59068
	Հրազդան	55	9 կմ ք. Երևանից ներքև, գյ. Դարբնիկի մոտ	Գործառնական	40.10388	44.38051
	Հրազդան	225	գյ. Գեղանիստի մոտ	Գործառնական	40.14350	44.43295
	Հրազդան	56	Գետաբերան	Գործառնական	39.99298	44.44586
	Մարմարիկ	57	0.5 կմ գյ. Հանքավանից վերև	Հղումային	40.66340	44.46692
	Մարմարիկ	58	Գետաբերան	Գործառնական	40.54579	44.75274
	Ծաղկաձոր (Տանձաղբյուր)	311	Ծաղկաձոր քաղաքից վերև	Հղումային	40.53427	44.69966
	Ծաղկաձոր (Տանձաղբյուր)	312	Ծաղկաձոր քաղաքից ներքև	Գործառնական	40.53535	44.74403
	Գետառ	59	Գետաբերան	Գործառնական	40.15528	44.47378

Ջրավազանային կառավարման տարածք	Ջրային ռեսուրս	Դիտակետի համար	Տեղադիրք	Մոնիթորինգի տեսակը	Աշխարհագրական կոորդինատներ	
					լայնություն	երկայնություն
Հրազդան	Ապարանի ջրամբար	111	Ամբարտակի մոտ	Հսկողական	40.48508	44.43586
	Երևանյան լիճ	112	Ամբարտակի մոտ	Գործառնական	40.15528	44.47379
Սևան	Ձկնագետ	60	0.5 կմ գյ. Սեմյոնովկայից վերև	Հղումային	40.65337	44.89236
	Ձկնագետ	61	Գետաբերան	Գործառնական	40.61709	44.96272
	Մասրիկ	62	0.5 կմ գյ. Վերին Շորժայից վերև	Հղումային	40.07766	45.81844
	Մասրիկ	63	Գետաբերան	Գործառնական	40.22116	45.64453
	Սոթք	64	6 կմ գյ. Սոթքից վերև	Հղումային	40.23219	45.93922
	Սոթք	65	Գետաբերան	Գործառնական	40.20006	45.85181
	Կարճաղբյուր	66	0.5 կմ գյ. Ախպրա- ձորից վերև	Հղումային	40.09357	45.64391
	Կարճաղբյուր	67	Գետաբերան	Գործառնական	40.17948	45.58358
	Արփա-Սևան ջրատար	68	0.7 կմ գյ. Ծովինարից հարավ-արևելք	Գործառնական	40.15617	45.49490
	Վարդենիս	69	0.5 կմ գյ. Վարդենիկից վերև	Հղումային	40.13157	45.44433
	Վարդենիս	70	Գետաբերան	Գործառնական	40.15458	45.43939
	Մարտունի	71	0.5 կմ գյ. Գեղիովիտից վերև	Հղումային	40.07857	45.29405
	Մարտունի	72	Գետաբերան	Գործառնական	40.15060	45.30013
	Արգիճի	73	0.5 կմ գյ. Լեռնա- հովիտից վերև	Հղումային	40.03263	45.23684
	Արգիճի	74	Գետաբերան	Գործառնական	40.15569	45.26794
	Ծակքար	75	Գետաբերան	Գործառնական	40.18025	45.23165
	Շողվազ	76	Գետաբերան	Գործառնական	40.18562	45.22727

Ջրավազանային կառավարման տարածք	Ջրային ռեսուրս	Դիտակետի համար	Տեղադիրք	Մոնիթորինգի տեսակը	Աշխարհագրական կոորդինատներ	
					լայնություն	երկայնություն
Սևան	Գավառագետ	77	0.5 կմ գլ. Ծաղկաշենից վերև	Հղումային	40.29327	45.04236
	Գավառագետ	78	Գետաբերան	Գործառնական	40.36399	45.17619
	Սևանա լիճ	115-ՄՄ	Ծախաթաղ- ափամերձ	Հսկողական	40.40914	45.46089
	Սևանա լիճ	115'-ՄՄ	Ծախաթաղ- կենտրոնական	Հսկողական	40.40508	45.44769
	Սևանա լիճ	116-ՄՄ	Փամբակ-ափամերձ	Հսկողական	40.36483	45.53225
	Սևանա լիճ	116'-ՄՄ	Փամբակ- կենտրոնական	Հսկողական	40.36056	45.51911
	Սևանա լիճ	117-ՄՄ	Արեգունի -ափամերձ	Հսկողական	40.32406	45.59022
	Սևանա լիճ	117'-ՄՄ	Արեգունի- կենտրոնական	Հսկողական	40.32250	45.58400
	Սևանա լիճ	118-ՄՄ	Գիլի-ափամերձ	Հսկողական	40.25264	45.63047
	Սևանա լիճ	118'-ՄՄ	Գիլի-կենտրոնական	Հսկողական	40.27633	45.59589
	Սևանա լիճ	119-ՄՄ	Արփա -ափամերձ	Հսկողական	40.16525	45.49514
	Սևանա լիճ	119'-ՄՄ	Արփա- կենտրոնական	Հսկողական	40.22492	45.52719
	Սևանա լիճ	120-ՄՄ	Ծովինար-ափամերձ	Հսկողական	40.18842	45.45042
	Սևանա լիճ	120'-ՄՄ	Ծովինար- կենտրոնական	Հսկողական	40.20692	45.45658
	Սևանա լիճ	121-ՄՄ	Մարտունի- ափամերձ	Հսկողական	40.16869	45.30122
	Սևանա լիճ	121'-ՄՄ	Մարտունի- կենտրոնական	Հսկողական	40.18178	45.30433
	Սևանա լիճ	123-ՄՄ	Կարմիր գյուղ- ափամերձ	Հսկողական	40.28600	45.22214

<i>Ջրավազանային կառավարման տարածք</i>	<i>Ջրային ռեսուրս</i>	<i>Դիտակետի համար</i>	<i>Տեղադիրք</i>	<i>Մոնիթորինգի տեսակը</i>	<i>Աշխարհագրական կոորդինատներ</i>	
					<i>լայնություն</i>	<i>երկայնություն</i>
<i>Սևան</i>	<i>Սևանա լիճ</i>	<i>123'-ՄՄ</i>	<i>Կարմիր գյուղ- կենտրոնական</i>	<i>Հսկողական</i>	<i>40.28728</i>	<i>45.27681</i>
	<i>Սևանա լիճ</i>	<i>124-ՄՄ</i>	<i>Նորատուս- ափամերձ</i>	<i>Հսկողական</i>	<i>40.39383</i>	<i>45.23767</i>
	<i>Սևանա լիճ</i>	<i>124'-ՄՄ</i>	<i>Նորատուս- կենտրոնական</i>	<i>Հսկողական</i>	<i>40.38058</i>	<i>45.33211</i>
	<i>Սևանա լիճ</i>	<i>125-ՓՄ</i>	<i>Գավառագետ- ափամերձ</i>	<i>Հսկողական</i>	<i>40.42908</i>	<i>45.19636</i>
	<i>Սևանա լիճ</i>	<i>125'-ՓՄ</i>	<i>Գավառագետ- կենտրոնական</i>	<i>Հսկողական</i>	<i>40.44906</i>	<i>45.18486</i>
	<i>Սևանա լիճ</i>	<i>126-ՓՄ</i>	<i>Այրիվանք-ափամերձ</i>	<i>Հսկողական</i>	<i>40.43736</i>	<i>45.11172</i>
	<i>Սևանա լիճ</i>	<i>126'-ՓՄ</i>	<i>Այրիվանք- կենտրոնական</i>	<i>Հսկողական</i>	<i>40.45083</i>	<i>45.12369</i>
	<i>Սևանա լիճ</i>	<i>127-ՓՄ</i>	<i>Մոդելային- ափամերձ</i>	<i>Հսկողական</i>	<i>40.51261</i>	<i>45.00763</i>
	<i>Սևանա լիճ</i>	<i>127'-ՓՄ</i>	<i>Մոդելային- կենտրոնական</i>	<i>Հսկողական</i>	<i>40.51967</i>	<i>45.02730</i>
	<i>Սևանա լիճ</i>	<i>128-ՓՄ</i>	<i>Լճաշեն-ափամերձ</i>	<i>Հսկողական</i>	<i>40.52589</i>	<i>44.96053</i>
	<i>Սևանա լիճ</i>	<i>128'-ՓՄ</i>	<i>Լճաշեն- կենտրոնական</i>	<i>Հսկողական</i>	<i>40.52035</i>	<i>44.98335</i>
	<i>Սևանա լիճ</i>	<i>129-ՓՄ</i>	<i>Ծովագյուղ- ափամերձ</i>	<i>Հսկողական</i>	<i>40.61978</i>	<i>44.98456</i>

<i>Ջրավազանային կառավարման տարածք</i>	<i>Ջրային ռեսուրս</i>	<i>Դիտակետի համար</i>	<i>Տեղադիրք</i>	<i>Մոնիթորինգի տեսակը</i>	<i>Աշխարհագրական կոորդինատներ</i>	
					<i>լայնություն</i>	<i>երկայնություն</i>
<i>Սևան</i>	<i>Սևանա լիճ</i>	<i>129'-ՓՄ</i>	<i>Ծովագյուղ- կենտրոնական</i>	<i>Հսկողական</i>	<i>40.61211</i>	<i>44.98269</i>
	<i>Սևանա լիճ</i>	<i>130-ՓՄ</i>	<i>Գյունեյ-ափամերձ</i>	<i>Հսկողական</i>	<i>40.60908</i>	<i>45.04525</i>
	<i>Սևանա լիճ</i>	<i>130'-ՓՄ</i>	<i>Գյունեյ- կենտրոնական</i>	<i>Հսկողական</i>	<i>40.60900</i>	<i>45.04631</i>
	<i>Սևանա լիճ</i>	<i>131-ՓՄ</i>	<i>Շորժա-ափամերձ</i>	<i>Հսկողական</i>	<i>40.48975</i>	<i>45.25161</i>
	<i>Սևանա լիճ</i>	<i>131'-ՓՄ</i>	<i>Շորժա- կենտրոնական</i>	<i>Հսկողական</i>	<i>40.49689</i>	<i>45.26961</i>
	<i>Սևանա լիճ</i>	<i>122'-ՄՄ</i>	<i>24-րդ կայան- կենտրոնական</i>	<i>Հսկողական</i>	<i>40.23294</i>	<i>45.26084</i>
<i>Արարատյան</i>	<i>Արաքս</i>	<i>28</i>	<i>0.5 կմ ք. Արարատից ներքև</i>	<i>Աղտոտիչների տեղափոխման</i>	<i>39.79531</i>	<i>44.69093</i>
	<i>Վեդի</i>	<i>80</i>	<i>0.5 կմ գյ. Ուրցաձորից վերև</i>	<i>Հղումային</i>	<i>39.94499</i>	<i>44.87135</i>
	<i>Վեդի</i>	<i>82</i>	<i>6 կմ ք. Արարատից ներքև</i>	<i>Գործառնական</i>	<i>39.85685</i>	<i>44.65946</i>
	<i>Արփա</i>	<i>83</i>	<i>0.5 կմ ք. Ջերմուկից վերև</i>	<i>Հղումային</i>	<i>39.83813</i>	<i>45.67713</i>
	<i>Արփա</i>	<i>84</i>	<i>0.5 կմ ք. Վայքից վերև</i>	<i>Գործառնական</i>	<i>39.68439</i>	<i>45.49831</i>
	<i>Արփա</i>	<i>85</i>	<i>0.5 կմ ք. Վայքից ներքև</i>	<i>Գործառնական</i>	<i>39.70796</i>	<i>45.42570</i>
	<i>Արփա</i>	<i>86</i>	<i>0.5 կմ ք. Եղեգնաձորից վերև</i>	<i>Գործառնական</i>	<i>39.74028</i>	<i>45.34383</i>
	<i>Արփա</i>	<i>87</i>	<i>0.5 կմ գյ. Արենիից ներքև</i>	<i>Գործառնական</i>	<i>39.72019</i>	<i>45.15524</i>

Ջրավազանային կառավարման տարածք	Ջրային ռեսուրս	Դիտակետի համար	Տեղադիրք	Մոնիթորինգի տեսակը	Աշխարհագրական կոորդինատներ	
					լայնություն	երկայնություն
Արարատյան	Եղեգիս	88	0.5 կմ գյ. Շատինից ներքև	Գործառնական	39.74831	45.31175
	Ազատի ջրամբար	113	Ամբարտակի մոտ	Հսկողական	40.07031	44.59475
	Կեչուտի ջրամբար	114	Ամբարտակի մոտ	Հսկողական	39.79164	45.64919
Հարավային	Արաքս	29	2 կմ ք. Ագարակից հարավ	Աղտոտիչների տեղափոխման	38.84120	46.16058
	Արաքս	30	2.5 կմ ք. Ագարակից հարավ-արևելք	Աղտոտիչների տեղափոխման	38.86553	46.21999
	Մեղրիգետ	89	0.5 կմ ք. Մեղրիից վերև	Հսկողական	38.91993	46.22443
	Մեղրիգետ	90	Գետաբերան	Գործառնական	38.88783	46.26517
	Կարճնան	344	Գետաբերան	Գործառնական	38.85865	46.21273
	Ողջի	91	1.7 կմ ք. Քաջարանից վերև	Հղումային	39.15683	46.09820
	Ողջի	92	1.8 կմ ք. Քաջարանից ներքև	Գործառնական	39.15026	46.19186
	Ողջի	93	0.8 կմ ք. Կապանից վերև	Գործառնական	39.22329	46.34842
	Ողջի	94	0.5 կմ Կապանի օդանավակայանից ներքև	Գործառնական	39.20059	46.46380
	Աճանան (Նորաշենիկ)	346	3 կմ գյ. Աճանանից վերև	Հղումային	39.25450	46.40259
	Աճանան (Նորաշենիկ)	347	գետաբերան	Գործառնական	39.20409	46.46215

Ջրավազանային կառավարման տարածք	Ջրային ռեսուրս	Դիտակետի համար	Տեղադիրք	Մոնիթորինգի տեսակը	Աշխարհագրական կոորդինատներ	
					լայնություն	երկայնություն
Հարավային	Գեղի	97	0.5 կմ գլ. Աջաբաջից վերև	Հղումային	39.25476	46.07290
	Գեղի	98	Գետաբերան	Գործառնական	39.19999	46.25915
	Որոտան	99	0.5 կմ գլ. Գորայքից վերև	Հղումային	39.68450	45.77656
	Որոտան	100	3 կմ ք. Միսիանից վերև	Հսկողական	39.53677	46.01196
	Որոտան	101	6 կմ ք. Միսիանից ներքև	Գործառնական	39.51269	46.04594
	Որոտան	102	0.5 կմ գլ. Տաթև ՀԷԿ- ից ներքև	Գործառնական	39.42683	46.37339
	Միսիան	103	0.5 կմ գլ. Արևիսից վերև	Հղումային	39.40186	45.90044
	Միսիան	104	Գետաբերան	Գործառնական	39.51006	46.04898
	Վարարակ	106	5 կմ ք. Գորիսից վերև	Հղումային	39.53621	46.29426
	Վարարակ	107	1.5 կմ ք. Գորիսից ներքև	Գործառնական	39.48552	46.35916

Մակերևութային ջրերում որոշվող ցուցանիշների ցանկ

- | | |
|--|------------------|
| 1. Ջերմաստիճան | 22. Ամոնիում իոն |
| 2. Գույն | 23. Սիլիցիում |
| 3. Հոտ | 24. Կալիում |
| 4. Թափանցելիություն | 25. Նատրիում |
| 5. Կախության չոր նյութեր
(ԿՉՆ) | 26. Լիթիում |
| 6. Էլեկտրահաղորդականություն | 27. Կալցիում |
| 7. Լուծված թթվածին | 28. Մագնեզիում |
| 8. Թթվածնի հագեցվածություն | 29. Սելեն |
| 9. Թթվածնի հնգօրյա
կենսաքիմիական
պահանջարկ (ԹԿՊ ₅) | 30. Այլումին |
| 10. Թթվածնի քիմիական
պահանջարկ (ԹԲՊ) | 31. Քրոմ |
| 11. Ջրածնային ցուցիչ | 32. Երկաթ |
| 12. Ընդհանուր լուծված աղեր
(ԸԼԱ) | 33. Մանգան |
| 13. Կոշտություն | 34. Պղինձ |
| 14. Հիդրոկարբոնատ իոն | 35. Ցինկ |
| 15. Սուլֆատներ | 36. Արսեն |
| 16. Քլորիդներ | 37. Ստրոնցիում |
| 17. Ֆտորիդներ | 38. Կադմիում |
| 18. Ֆոսֆատ իոն | 39. Կապար |
| 19. Ընդհանուր ֆոսֆոր | 40. Կոբալտ |
| 20. Նիտրիտ իոն | 41. Նիկել |
| 21. Նիտրատ իոն | 42. Վանադիում |
| | 43. Մոլիբդեն |
| | 44. Բարիում |
| | 45. Բերիլիում |
| | 46. Բոր |
| | 47. Անագ |

Մակերևութային ջրերի որակի նորմեր (ըստ ՀՀ կառավարության 2011թվականի հունվարի 27-ի N 75-Ն որոշման)

Որակի ցուցանիշներ	Որակի դաս					Միավոր
	I	II	III	IV	V	
	գերազանց	լավ	միջակ	անբավարար	վատ	
Լուծված թթվածին	>7 կամ ՖԿ*	>6	>5	>4	<4	մգ Օ ₂ /լ
ԹԿՊ ₅	3	5	9	18	>18	մգ Օ ₂ /լ
ԹՔՊ _{Cr}	10	25	40	80	>80	մգ Օ/լ
Ամոնիում իոն	0,2 կամ ՖԿ	0,4	1,2	2,4	> 2,4	մգ N/լ
Նիտրիտ իոն	0,01 կամ ՖԿ	0,06	0,12	0,3	>0,3	մգ N/լ
Նիտրատ իոն	1 կամ ՖԿ	2,5	5,6	11,3	>11,3	մգ N/լ
Ֆոսֆատ իոն	0,05 կամ ՖԿ	0,1	0,2	0,4	>0,4	մգP/լ
Ցինկ, ընդհանուր	ՖԿ	100	200	500	>500	մկգ/լ
Պղինձ, ընդհանուր	ՖԿ	ՖԿ+20	50	100	>100	մկգ/լ
Քրոմ, ընդհանուր	ՖԿ	ՖԿ+10 (50)	100	250	>250	մկգ/լ
Արսեն, ընդհանուր	ՖԿ	20	50	100	>100	մկգ/լ
Կադմիում, ընդհանուր	ՖԿ	ՖԿ+1	ՖԿ+2	ՖԿ+4	>ՖԿ+4	մկգ/լ
Կապար, ընդհանուր	ՖԿ	ՖԿ+10	25	50	>50	մկգ/լ
Նիկել, ընդհանուր	ՖԿ	ՖԿ+10 (20)	50	100	>100	մկգ/լ
Մոլիբդեն, ընդհանուր	ՖԿ	2xՖԿ կամ 10	4xՖԿ կամ 25	8xՖԿ կամ 50	>8xՖԿ	մկգ/լ
Մանգան, ընդհանուր	ՖԿ	2xՖԿ կամ 100	4xՖԿ կամ 200	8xՖԿ կամ 500	>8xՖԿ	մկգ/լ
Վանադիում, ընդհանուր	ՖԿ	2xՖԿ+5 կամ 10	4xՖԿ	8xՖԿ կամ 100	>8xՖԿ	մկգ/լ
Կոբալտ, ընդհանուր	ՖԿ	2xՖԿ կամ 20	4xՖԿ կամ 50	8xՖԿ կամ 100	>8xՖԿ	մկգ/լ
Երկաթ, ընդհանուր	ՖԿ	2xՖԿ կամ 0,5	0,5	1	>1	մգ/լ
Կալցիում	ՖԿ	100	200	300	>300	մգ/լ
Մագնեզիում	ՖԿ	50	100	200	>200	մգ/լ
Բարիում	ՖԿ	2xՖԿ կամ 100	4xՖԿ կամ 250	1000	>1000	մկգ/լ
Բերիլիում	ՖԿ	2xՖԿ	4xՖԿ	100	>100	մկգ/լ
Կալիում	ՖԿ	2xՖԿ	4xՖԿ	8xՖԿ	>8xՖԿ	մգ/լ
Նատրիում	ՖԿ	2xՖԿ	4xՖԿ	8xՖԿ	>8xՖԿ	մգ/լ
Լիթիում	ՖԿ	ՖԿ	-	2500	>2500	մկգ/լ
Բոր	ՖԿ	450	700	1000	>2000	մկգ/լ
Ալյումին	ՖԿ	2xՖԿ	4xՖԿ	5000	>5000	մկգ/լ
Սելեն, ընդհանուր	ՖԿ կամ 10	20	40	80	>80	մկգ/լ
Ծարիր, ընդհանուր	ՖԿ	2xՖԿ	4xՖԿ	8xՖԿ	>8xՖԿ	մկգ/լ
Անագ, ընդհանուր	ՖԿ	2xՖԿ	4xՖԿ	8xՖԿ	>8xՖԿ	մկգ/լ
ԹՔՊ _{Mn}	5 կամ ՖԿ	10	15	20	>20	մգ Օ ₂ /լ
Ընդհանուր անօրգանական ազոտ	1,5 կամ ՖԿ	4	8	16	>16	մգ N/լ
Ընդհանուր ֆոսֆոր	0,1 կամ ՖԿ	0,2	0,4	1	>1	մգ լ
Քլորիդ իոն	ՖԿ	2xՖԿ	150	200	> 200	մգ/լ
Սուլֆատ իոն	ՖԿ	2xՖԿ	150	250	> 250	մգ/լ
Սիլիկատ իոն	ՖԿ	2xՖԿ կամ 10	4xՖԿ կամ 20	8xՖԿ	>8xՖԿ	մգSi/լ
Ընդհանուր հանքայնացում	ՖԿ	2xՖԿ	1000	1500**	>1500	մգ/լ
Էլեկտրահաղորդականություն	ՖԿ	2xՖԿ	1000	1500**	>1500	մկՍիմ/սմ
Կոշտություն	2,8	10	20	40	<40	մգէկվ/լ
Կախված մասնիկներ	ՖԿ	1,2xՖԿ	2xՖԿ (30)	4xՖԿ	>4xՖԿ	մգ/լ
Հոտ (20°C և 60°C)	<2 (բնական)	2 (բնական)	2	4	>4	բալ
Գույն	(բնական)	>5 (բնական)	20	30	>200	աստ,

* Ֆ Կ - ֆոն ա յ ի ն կ ո ն ց ե ն տր ա ց ի ա *

Ծանոթագրություն. ՀՀ 14 խոշոր գետային ավազանների գետերի, գետերի առանձին հատվածների և վտակների որակի ցուցանիշների ֆոնային կոնցենտրացիաները և էկոլոգիական նորմերի ամբողջական ցանկը տրված է <http://www.meteomonitoring.am/> ինտերնետային կայքում:

**Մակերևութային ջրերում աղտոտիչների ձկնատնտեսական սահմանային
թույլատրելի կոնցենտրացիաներ***

Ցուցանիշները	Վնասակարության լիմիտացված ցուցանիշը	Սահմանային թույլատրելի կոնցենտրացիա, մգ/դմ³
Լուծված թթվածին	Ընդհանուր պահանջներ	6-ից ոչ պակաս
Թթվածնի կենսաքիմիական պահանջարկ (5 օր)	-//-	3.0
Թթվածնի քիմիական	-//-	30.0
Ամոնիում իոն	Թունագիտական	0.5 (N/դմ³-0.39)
Նիտրատ իոն	Սանիտարա-թունագիտական	40.0 (N/դմ³-9.0)
Նիտրիտ իոն	Թունագիտական	0.08 (N/դմ³-0.02)
Ֆոսֆատ իոն	Ընդհանուր պահանջներ	3.5
Ընդհանուր երկաթ	Թունագիտական	0.5
Մելեն	-//-	0.001
Պղինձ	-//-	0.001
Յինկ	-//-	0.01
Այրումին	-//-	0.04
Վանադիում	-//-	0.001
Քրոմ	-//-	0.001
Մանգան	-//-	0.01
Կալիում	-//-	50.0
Կալցիում	-//-	180.0
Մագնեզիում	-//-	40.0
Նատրիում	-//-	120.0
Կոբալտ	-//-	0.01
Նիկել	-//-	0.01
Արսեն	-//-	0.05
Կադմիում	-//-	0.005
Կապար	-//-	0.1
Բրոմ	Սանիտարա-թունագիտական	0.2
Մոլիբդեն	-//-	0.5
Ստրոնցիում	-//-	2.0
Սուլֆատ իոն	-//-	100.0
Քլորիդ իոն	-//-	300.0

* М. Л.Кашинцев, Б.С. Степаненко, С. Н. Анисова Обобщенный перечень предельно допустимых концентраций и ориентировочно-безопасных уровней воздействия вредных веществ для воды рыбохозяйственных водоемов. Москва 1990г.

«Հիդրոոդերևութաբանության և մոնիթորինգի կենտրոն»
ՊՈԱԿ
Հասցե՝ ՀՀ, ք. Երևան, Չարենցի 46

Գայք էջ՝ meteomonitoring.am
Էլ. փոստ՝ hmc@env.am

Տեղեկատվական վերլուծության ծառայություն
Հասցե՝ ՀՀ, ք. Երևան, Կառավարական տուն 3

Էլ. փոստ՝ iac@env.am
Հեռախոս՝ [\(011\) 810-084](tel:011810084)